ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"05" ......մարտի...... 2025թ. N 385-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.10.2024 թվականի N 2479-Ա, N 2487-Ա և 21.10. 2024թ. N 2496-Ա հրամանները, «Վիզզ Էիր Գրուպ» ընկերության 2025 թվականի փետրվարի 3-ի գրությունը և ՀՀ էկոնոմիկայի նախարարության 03.03.2025 թվականի թիվ 09/4254-2025 եզրակացությունը:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնությունը երկարաձգել ստորև նշված ավիաընկերության օդային տրանսպորտով մեկնող ֆիզիկական անձանց համար.

1) «Վիզզ Էիր Աբու Դաբի» ավիաընկերության (Աբու Դաբի-Երևան 07.02.2025թ.-ից երկարաձգել 24 ամսով):

2) «Վիզզ Էիր Հունգարի» ավիաընկերության (Լառնակա-Երևան 22.06.2025թ.-ից երկարաձգել 24 ամսով):

3) «Վիզզ Էիր Մալթա» ավիաընկերության (Հռոմ-Երևան 21.10.2025թ.-ից երկարաձգել 24 ամսով):

4) «Վիզզ Էիր Մալթա» ավիաընկերության (Միլան-Երևան 13.12.2025թ.-ից երկարաձգել 24 ամսով):

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումն Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

05.03.2025

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Подписано: SIMONYAN ARMEN 4003890647 /Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք.Երևան